ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 54-Ա

Անուշավան համայնք

30 Նոյեմբերի 2016թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 33, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 5 ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 39 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 12-րդ կետը՝

համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ղեկավարին կից ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանու 2010թվականի հուլիսի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների կազմը հաստատելու մասին>> թիվ 33, 2013թվականի հունվարի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների կազմը հաստատելու մասին>> թիվ 5 և 2013թվականի նոյեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և հանձնաժողովի անհատական կազմից հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար սահմանելու մասին>> թիվ 39 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-7 Դեմ-0

Մ. Բայադյան	կողմ	----------
Ա. Կարոյան	կողմ	----------
Ռ. Հակոբյան	կողմ	----------
Ռ. Հարությունյան	կողմ	----------
Ա. Վարդանյան	կողմ	----------
Գ. Վարդանյան	կողմ	----------
Ա. Տեփանոսյան	կողմ	----------

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

30 նոյեմբերի 2016թվական

Հավելված՝
ՀՀ Շիրակի մարզի
Անուշավանի համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի
N 54-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմ

Հանձնաժողովի նախագահ՝

Աննա Աղաբաբյան – Անուշավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Հանձնաժողովի անդամներ՝

Հրաչյա Ղահրամանյան – Անուշավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Օվսաննա Սարոյան – Անուշավանի <<Նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն

Սիլվարդ Վարդանյան – Անուշավանի բուժ-մանկաբարձական կետի բուժքույր

Օֆելյա Ստեփանյան – Անուշավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ուսուցչուհի

Ռոզա Հակոբյան – Անուշավանի համայնքի ավագանու անդամ